ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/89

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի կողմից 22.10.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը (այսուհետ նաև՝ Մասնակից) 22.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2018 թվականի հոկտեմբերի 10-ին (2018-10-10 22:52:11-ից) ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում (www.gnumner.am) հրապարակվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ԳՀ ընթացակարգի

հայտարարություն և հրավեր մինչև 2018 թվականի հոկտեմբերի 17-ը (2018-10-17 10:20:00 ժամը) ներառյալ:

Ըստ սահմանվածի, 2018 թվականի հոկտեմբերի 17-ին՝ մինչև ժամը 10:20-ը, Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը ներկայացրել է մասնակցության հայտ: Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 10:20-ին, որի ժամանակ պարզ է եղել, որ Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը հանդիսանում է մրցույթի միակ մասնակիցը: Հանձնաժողովի անդամները, բացելով Մասնակցի կողմից ստորագրված փակ ծրարը, արձանագրել են, որ Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը ներկայացրել է սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ:

«ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Արմեն Մկրտչյանը, համոզվելով, որ փաստաթղթերում առկա է Մասնակցի էլեկտրոնային փոստի (էլ-փոստ) հասցեն, բանավոր տեղեկացրել է, որ նիստի արձանագրությունը կուղարկվի Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի էլ-փոստի հասցեին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 43-րդ կետի 1-ին մասի, այն է հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում, մինչդեռ հանձնաժողովի քարտուղարը ոչ միայն չի հրապարակել տեղեկագրում այլև նույն օրը՝ հոկտեմբերի 17-ին՝ ժամը 15:34-ի սահմանում, զանգահարել է Ֆ/Ա Ջանիկ Սևոյանին և մասնավորապես հարցրել՝ արդյոք տեղադրվող ծրագրի օգտագործման լեզուն կարող է լինել ռուսերեն, արդյոք Մասնակիցը կարող է առաջացած ծրագրային գործարանային խնդիրների ժամանակ օժանդակել իրենց: Հարցերին Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը տվել է դրական պատասխան, այն է՝ տեղադրվող ծրագիրը ռուսերեն է և որ Մասնակիցը կօժանդակի ծրագրում առաջացած գործարանային խնդիրների ժամանակ: Հանձնաժողովի քարտուղարը խոսակցությունը մեկնաբանել է որպես բանակցություններ, ապա հավելել է, որ լրացուցիչ տեղեկատվությունը նույն օրը Մասնակիցը կստանա էլ-փոստով: Սակայն, նույն օրը՝ հոկտեմբերի 17-ին ժամը 16:52-ի և 18:48-ի սահմանում, կրկին զանգահարել Մասնակցին՝ նպատակ ունենալով չեղարկելու մրցույթը: Ստանալով Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի կողմից բացասական պատասխան՝ նա առաջարկել է ուղարկել բանակցությունների հրավեր

հոկտեմբերի 18-ին, իսկ հաջորդը օրը՝ հոկտեմբերի 19-ին: Չուղարկելով ո՛չ հայտերի բացման նիստի արձանագրությունը, ո՛չ բանակցությունների հրավերը՝ հոկտեմբերի 19-ի առավոտյան հանձնաժողովի քարտուղարը, զանգահարել է և հրավիրել Ֆ/Ա Ջանիկ Սևոյանին «Փորձաքննությունների ազգային բյուրո» հանդիպման: Մասնակիցն առաջարկել է իրեն գրավոր ուղղել իրենց հարցերը, որոնց վերջինս կտա պատասխաններ, սակայն հանձնաժողովի քարտուղարը կրկին չի ուղարկել ոչինչ:

Նույն օրը՝ հոկտեմբերի 19-ին, ժամը 17:46:57-ին տեղեկագրում (www.gnumner.am)-ում հրապարակվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրություն և գրանցամատյան, իսկ 17:48:57-ին ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը: Իսկ երեկոյան (19 հոկ, 2018թ., 19:39) Մասնակցի էլ-հասցեին ուղարկվել է հոկտեմբերի 17-ի հայտերի բացման նիստի արձանագրությունը, որտեղ նշվում է, որ տեխնիկական բնութագրում առկա է վրիպակ և հանձնաժողովը թույլտվություն է խնդրել կառավարումն իրականացնող լիազոր մարմնից գնման պահանջը դադարեցնելու մասին: Նույն նամակում կցված էր նաև հոկտեմբերի 19-ի հանձնաժողովի նիստի արձանագրությունը գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին և Մասնակցին ուղված մի գրություն, որտեղ հանձնաժողովի քարտուղարը հայտնում է, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար 2018 թվականի հոկտեմբերի 10-ին հայտարարված՝ սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման համար «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտարարվել է չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով:

Փաստացի, հոկտեմբերի 17-ին կայացած հայտերի բացման նիստում հանձնաժողովը դիմել էր լիազոր մարմնին գնման պահանջը դադարեցնելու թույլտվություն ստանալու

համար և միևնույն ժամանակ Մասնակցի հետ ունեցած հեռախոսազանգերի միջոցով փորձում էր ճշգրտել վերջինիս առաջարկած գնին համարժեք տրվող ծրագրի անվանումը, լեզուն և շատ այլ մանրամասներ, որոնցից ենթադրվում է, որ հանձնաժողովը, Մասնակցի հետ ունեցած խոսակցությունների արդյունքնում ձևավորել է այնպիսի պահանջ, որը անուղղակի Ֆ/Ա Ջանիկ Սևոյանին դուրս է մղում մրցույթից և հետագայի համար ստեղծում մրցույթին մասնակցելու անհնարինություն:

Մասնակիցը գտնում է, որ հանձնաժողովը, առանց իրեն անմիջապես տեղյակ պահելու, գնման պահանջի դադարեցման մասին թույլտվություն է ստացել, զուգահեռաբար, իբրև ճշգրտում, կանխամտածված և միտումնավոր կերպով իմացել է ծրագրի վերաբերյալ Մասնակցի կողմից տնօրինվող կոմերցիոն գաղտնիքը:

Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը գտնում է, որ իմանալով կոմերցիոն գաղտնիքը, միտում կա իրեն դուրս մղելու մրցույթից, քանզի հոկտեմբերի 17-ի հանձնաժողովի նիստում արձանագրված գնման պահանջը դադարեցնելու հիմքի մասին հիմնավորումը մտացածին է և անհիմն:

Մեջբերում հոկտեմբերի 17-ի հանձնաժողովի նիստի արձանագրությունից՝

Տեխնիկական բնութագրում առկա է վրիպակ և փաստացի կազմվել է թերի՝ մասնավորապես, բացակայում են հետևյալ տեխնիկական պահանջները.

ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը),

բ) ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,

գ) ծրագրի տարեկան թարմացումները,

դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը,

ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն),

զ) ծրագրի բանալիների քանակը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 13-րդ կետի այն է, Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից, նշանակում է, որ հայտի կազմման փուլում, մասնագիտական խումբն է կազմել

տեխնիկական բնութագիրը, որն էլ համաձայն նույն որոշման 31-րդ կետի հաստատել է գնահատող հանձնաժողովը, վերջինիս կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Արդյունքում ստացվում է, որ նույն հանձնաժողովը, իր մեկ նիստում հաստատում, իսկ մեկ այլ նիստում հանկարծակի դիմում է Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմած մասնագետներին և ստանում վերոնշյալ մտացածին հիմնավորումը: Որտեղ և հարց է առաջանում, այդ ինչպես Ընթացակարգը կայանալու և որպես միակ թեկնածուի հանդես գալուց հետո, հանձնաժողովը որոշեց դիմել մասնագիտական խորհրդին և առանց Մասնակցին նիստերի մասին տեղեկացնելու, որոշում է կայացրել դիմել լիազոր մարմնին թույլտվություն ստանալու գնման պահանջը դադարեցնելու և ապա պատասխանը ստանալուց հետո որոշում կայացրել դադարեցնելու գնման պահանջը:

Ուսումնասիրելով այս հանգամանքները և Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ պարզ է դառնում, որ վերոնշյալ, իրենց կողմից բերված հանգամանքները հաշվի են առվել ի սկզբանե, և այժմ դրանք արհեստածին, անհիմն «թերություններ» են միտված դադարեցնելու գնման պահանջը: Ընդ որում՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, լինելով Հայաստանի Հանրապետության հեղինակավոր փորձաքննությունների կենտրոններից մեկը, որի մասնագետների սխալանքի հնարավորությունը փոքր է ցանկացած այլ կազմակերպության սխալանքի ճշգրտության չափից, ինչպես կարող է նման թերություններ ունենալ, անզեն աչքով ակնհայտ այսպիսի պարզ ծրագրի տեխնիկական բնութագրում:

Զուգահեռ ուսումնասիրելով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հրապարակված տեխնիկական բնութագիրը, Մասնակիցը փաստում է, որ

1. այնտեղ նշված «PC-CRUSH» անվանումից ակնհայտ է դառնում, որ թերությունների շարքում իրենց նշած ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը) արդեն իսկ նշված է եղել առավել քան ստույգ, քանզի այդօրինակ/համարժեք ծրագրերը աշխատում են թարմ, նոր թողարկված տարբերակով, և նրանք ա) կետով չեն կարող նշել այլ տարբերակ: Օրինակ՝ եթե թողարկվել է v.8, ապա անհնարին է տեղադրել v.6-ը:

2. այնտեղ նշված «ծրագրի բանալի» արտահայտությունը, խոսում է այն մասին, որ բ) ծրագրի լիցենզիայի հավաստիության հարցը չի կարող քննարկվել քանզի «ծրագրի բանալի» արտահայտությունը համարժեք է «ծրագրի լիցենզիայի հավաստիության» արտահայտությանը:

3. նմանօրինակ/համարժեք ծրագրերում գ) ծրագրի տարեկան թարմացումը համարժեք է նոր ծրագիր գնելուն և այդ մասին չէր կարող նշվել նույն տեխնիկական բնութագրում:

4. այնտեղ նշված «Օգտատիրոջ ուղեցույցը», փաստում է, որ հաշվի է առնվել մասնագետների ուսուցման հարցը, իսկ հեռախոսազրույցների ընթացքում պատրաստակամություն եմ հայտնել ուսուցանել առանց լրացուցիչ գումարի, հետևաբար դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը կետի առաջին մասը բավարարված է, իսկ երկրորդ մասը նոր առաջացրած հանգամանք է, որտեղից ակնհայտ է դառնում, որ պետք է այս մասով լիներ այլ գնում՝ մասնավորապես ուսուցմանը համապատասխան գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրով:

5. նմանօրինակ/համարժեք ծրագրերը ունեն լեզուների ընտրության և ձևավորման հնարավորություն և ակնհայտ է, որ այն ևս ռուսերեն է, ինչի մասին Մասնակիցը հայտնել է նաև հանձնաժողովի քարտուղարին, այդ թվում՝ օգտատիրոջ ուղեցույցի ռուսերեն լինելու մասին, հետևաբար ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն) կետը արհեստական խոչընդոտ ստեղծելու հանգամանք է:

6. այնտեղ նշված «ծրագրի բանալի» արտահայտությունը, խոսում է այն մասին, որ ծրագրի բանալիների քանակը մեկն է, իսկ առհասարակ խոսել զ) ծրագրի բանալիների քանակը կետի մասին, այն էլ տեխնիկական բնութագրում, նշանակում է խոսել նույն ծրագրի մի քանի գնման մասին:

Արդյունքում ակնհայտ է դառնում, որ ներկայացված թերությունները անհիմն են, մտացածին, չունեն էական նշանակություն, չեն հանգեցնում ծրագրի ոչ լիարժեք օգտագործմանը և փորձաքննությունների ոչ պատշաճ կատարմանը և նպատակ ունեն մտացածին, անհիմն «թերությունների» քողի ներքո դադարեցնելու գնման պահանջը Մասնակցին այս փուլում հաղթող չճանաչելու, իսկ հետագայում մրցակցությունից դուրս մղելու համար:

Հիմք ընդունելով և պաշտպանելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 37-րդ հոդվածի առաջին կետի երկրորդ մասը, որի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝ դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա, ինչպես նաև նույն օրենքի 37-րդ հոդվածի երրորդ կետը, այն է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը մտացածին է գնման պահանջի դադարումը հակամրցակցային է և միտված հաղթող թեկնածուին հաղթող չճանաչելուն:

Հիմք ընդունելով նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին և երկրորդ կետերը, որոնք նույնպես չի կիրառվել փաստվող հանգամանքներով և հանգեցրել է, այլ ժամանակահատվածում հանձնաժողովի կողմից հնարավոր նիստերի կայացման և ետին ամսաթվով որոշումների ընդունմանը, որը կարելի է ապացուցել հանձնաժողովի նիստերի ձայնագրությունների ուսումնասիրմամբ:

Փաստելով նաև այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը թույլ տալով նմանօրինակ խախտումներ ենթադրյալ նպատակ է ունեցել այլ հանգամանքներում և այլ պայմանավորվածություններով իրականացնել Ընթացակարգը: Այս պարագայում էլ հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ կետը, այն է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին, գնահատող հանձնաժողովը կատարել է հակառակը, բացել է հայտը, նոր միայն գնման պահանջը դադարեցրել, ինչը կոմերցիոն գաղտնիքի կոպտագույն խախտում է, ֆինանսական առաջարկի, որպես գաղտնիք իմանալու սկզբունքով:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթում հայտերի բացման փաստացի ընթացակարգից և Ֆ/Ա Ջանիկ Սևոյանին, որպես միակ մասնակից ճանաչելուց հետո, ընթացակարգերում առկա են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի խախտումներ, որոնք հանգեցնում են Մասնակցի իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը:

Համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ձևավորած մասնագիտական խորհրդի կողմից ներկայացված «թերություններ»-ը, որոնցով նոր գնման պահանջի դեպքում պետք է ձևավորվի տեխնիկական նոր բնութագիրը և հիմք ընդունելով վերը նշված դրույթի վերլուծությունը, ուղղակիորեն պարզ է, որ ըստ օրենքի նույնիսկ ապագա հրավերում չեն կարող պարունակվել այնպիսի դրույթներ, որոնք կսահմանափակեն այս կամ այն մասնակցի մրցունակությունը, դրանք չեն կարող լինել խտրական և չեն կարող ներկայացնել հնարավոր մասնակիցներին ուղղված այնպիսի պահաջներ, որոնք կպարզեցնեն կամ կբարդացնեն գործընթացը:

Տվյալ պարագայում գործ ունենք այնպիսի իրավիճակի հետ, որը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքով արգելված ձևական խոչընդոտներ է առաջացնում գործընթացի՝ սահմանված կարգով կազմակերպման և անցկացման համար:

Վերոնշյալից բխում է, որ գնման պահանջը դադարեցնելու վերաբերյալ բերված հիմնավորումը հակասում է նաև գնումների գործընթացի կազմակերպման հիմնարար սկզբունքներին և պահանջներին:

Այսօրինակ գործելաոճում առկա են այնպիսի տարրեր, որոնք թույլ են տալիս ենթադրելու, որ պատվիրատուն, իմանալով մասնակցի ով լինելը, կարող է միտումնավոր, առանց հիմքի, տեխնիկական բնութագրի կազմման գործընթացից «թերություններ» մեջբերելով դադարեցնել գնման պահանջը, մասնակցից, տվյալ պարագայում նաև հաղթողից ազատվելու և հետագայում նույն ծառայության համար նոր գնում կազմակերպելու ակնկալիքով:

Վերոնշյալ դեպքերի առնչությամբ գրավոր տեղեկացվել է նաև ՀՀ Ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին:

Հաշվի առնելով վերոնշյալ խատումները, այն է, Մասնակցին հանձնաժողովի նիստերի կայացման և դրանցում ընդունված որոշումների մասին նախապես տեղյակ չպահելը, հեռախոսազանգերի միջոցով կանխամտածված կոմերցիոն գաղտնիքի բացահայտումը, ինչպես նաև գնման պահանջը մտացածին կերպով դադարեցնելու համար, իր լիազոր մարմնին չհիմնավորված փաստերով մոլորության մեջ գցելը, մտացածին հիմքեր ստեղծելը, Մասնակիցը բողոքով խնդրել է պարտավորեցնել՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել գնման պահանջի դադարեցման մասին որոշումը և ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել Ֆ/Ա Ջանիկ Սևոյանին:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.10.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.10.2018թ. թիվ 05/597 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից վերջինիս կարիքների համար սույն թվականի հոկտեմբերի 10-ին հայտարարվել է սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների

ձեռքբերման համար «ՓԱԲ-ԳՀԾԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգ՝ ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծության և մոդելավորման համակարգչային ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր) ձեռք բերելու նպատակով: Տվյալ ծրագրի ձեռքբերման և ներդրման արդյունքում 3D մոդելավորման միջոցով կազմակերպության փորձագետների կողմից պետք է իրականացվեն համապատասխան հետազոտություններ, որոնք թույլ կտան ստանալ օբյեկտիվ տեղեկատվություն ճանապարհատրանսպորտային պատահարին նախորդող և բուն ընթացքում իրադրության զարգացման՝ վթարի մեխանիզմի վերաբերյալ, հնարավորություն տալով նաև հիմնավոր վերլուծության արդյունքում փորձագիտական գնահատման ենթարկել քրեական գործերով ՃՏՊ-ին մասնակից անձանց հայտնած տեղեկության համապատասխանությունը պարզված հանգամանքներին:

Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների համակարգում հրապարակվել է «ՓԱԲ-ԳՀԾԲ-18/02» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, որի բացման նիստը տեղի է ունեցել 2018 թվականի հոկտեմբերի 17-ին:

2018 թվականի հոկտեմբերի 17-ին Պատվիրատուին ներկայացվել է Ջ. Սևոյանի մասնակցության հայտը: 2018 թվականի հոկտեմբերի 17-ին գնման ընթացակագի բացման նիստին պարզվել է, որ «ՓԱԲ-ԳՀԾԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներով նախատեսված չեն մի շարք բնութագրիչներ, որոնք էական նշանակություն ունեն գնման գործընթացի նպատակի իրականացման՝ Պատվիրատուի գործունեության համար անհրաժեշտ Ծրագրի և դրա կիրառման հնարավորությունների ձեռքբերման հարցում: Հանձնաժողովի աշխատանքները կասեցվել են որոշակի ժամանակով և շարունակվել 18.10.2018թ.-ին ժամը 15:00-ին, երբ ներկայացվել է մասնագիտական խմբի նիստի արձանագրությունն այն մասին, որ «ՓԱԲ-ԳՀԾԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման միջոցով սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների գնման հրավերի տեխնիկական բնութագիրը թերի է և այդ բնութագրով գնման առարկան չի հանդիսանում և չէր էլ կարող հանդիսանալ Պատվիրատուի համար անհրաժեշտ և համարժեք հատուցմամբ ձեռքբերում, մասնավորապես, չի արտացոլում պետական ոչ առևտրային

կազմակերպության համար անհրաժեշտ քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակված համապատասխան տեսակի դատական փորձաքննությունների իրականացման համար նոր մեթոդի (լիցենզավորված ծրագրի գործող նոր տարբերակի ներդրման և համապատասխան փորձագետիների կողմից դրա կիրառման համար անհրաժեշտ ուսուցման իրականացման) ներդրման ամբողջական նպատակի իրականացմանը: Նշված պահանջների բացակայությունը հանգեցնելու է համապատասխան Ծրագրի ձեռք չբերելուն և/կամ ծրագրի օգտագործման հնարավորություն չընդձեռնելուն, հանգեցնելով դատական փորձաքննությունների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարման ընթացքում դրա պատշաճ կիրառման անհնարինությանը: Այս առումով հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ վերոնշյալ ընթացակարգի համար գնման հայտ պատրաստած պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Գ. Մարտիրոսյանը, ով իրականացրել է շուկայի վերլուծություն և տիրապետել է գնման առարկայի ավելի հստակ և անհրաժեշտ բնութագրիչների վերաբերյալ տեղեկատվությանը, գտնվել է գործուղման մեջ և նրա բացակայությունը հանգեցրել է գնման առարկայի տեխնիկական բնութագրի ոչ լիարժեք կազմմանը (գործուղման փաստը հավաստող փաստաթղթի պատճենը կցվում է) և համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 13-րդ կետի՝ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից, նշված գնման առարկայի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է եղել նշել.

1. ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը),
2. ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,
3. ծրագրի տարեկան թարմացումները,
4. մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը,
5. ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն),
6. ծրագրի բանալիների քանակը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 58-րդ կետը Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մինչև ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի պատասխանի ստացումը խնդրո առարկայի կապակցությամբ:

Վերը շարադրվածի կապակցությամբ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 58-րդ կետով, այն է՝«եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա», Պատվիրատուն 18.10.2018թ. թիվ 05/586 գրությամբ (պատճենը կցվում է) դիմել է ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնին՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային: 19.10.2018թ. Պատվիրատուի կողմից ստացվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանի թիվ 224-Ա հրամանը (պատճենը կցվում է) գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ գնման պահանջը դադարելու հիմքով: Հիմք ընդունելով վերոգրյալը 19.10.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշել է սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման համար «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտարարել է չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով: Նույն օրը այդ մասին տեղեկացվել է նաև Ջ.Սևոյանը (գրության պատճենը կցվում է) (այսուհետ՝ դիմումատու) :

Մասնակիցը 22.10.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է համապատասխան բողոք:

Պատվիրատուն գտնում է, որ Մասնակցի կողմից իր բողոքով ներկայացված ձևակերպումներն ակնհայտ անհիմն են, որի առումով ներկայացվում է տեխնիկական բնութագրի լրացման վերաբերյալ հետևյալ հիմնավորումները.

1. ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը), 2. ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,

Պատվիրատուն, հանդիսանալով Հայաստանի Հանրապետությունում առաջատար խոշորագույն դատափորձագիտական կառույց, որը փորձաքննություն իրականացնելով, ապացուցողական ամուր հիմքեր ստեղծելով, նպաստում է հանրապետությունում արդարադատության իրականացման գործընթացին, առանձնակի կարևորում է նորագույն արդի ծրագրերով աշխատելու հնարավորությունները՝ առավել ևս հաշվի առնելով կիրառվող հետազոտության մեթոդների ճշտության, հավաստիության և, հետևաբար, փորձագետի եզրակացության արժանահավատության խիստ կարևորությունը: Այս համատեքստում սկզբնական ձևակերպմամբ տեխնիկական բնութագրի տառացի մեկնաբանության արդյունքում հնարավորություն էր ստեղծվելու ոչ նոր տարբերակի տրամադրման համար, առհասարակ չբացառելով նաև համընդհանուր մասնագիտական ճանաչում և գիտական հիմնավորվածություն չունեցող տարբերակի ներկայացում, ինչն, առհասարակ, աննպատակահարմար է դատափորձագիտական պետական ոչ առևտրային կազմակերպության համար: Նման դեպքում Ծրագրի ոչ արդի կամ համընդհանուր մասնագիտական ճանաչում և գիտական հիմնավորվածություն չունեցող տարբերակի կիրառմամբ հետազոտությունների կատարմամբ փորձաքննությունները կհամարվեն անթույլատրելի և կհանդիսանան նմանատիպ գործերի ճիշտ, օբյեկտիվ և անաչառ լուծման համար էական խոչընդոտ:

3. ծրագրի տարեկան թարմացումները,

Մասնակցի այն պնդումը, որ տարեկան թարմացումները համարժեք են նոր ծրագիր գնելուն, ակնհայտ անհիմն են և տարակուսանք են առաջացնում: Գործող պրակտիկայում տարբեր սարքավորումների և ծրագրերի ներդրումից (ինչպիսիք տարբեր փորձագիտական ուղղություններով առկա են Պատվիրատուի մոտ) հետո գործնականում տարբեր ծրագրային խնդիրներ առաջացանալու պարագայում կամ ծրագրի աշխատանքների կատարման ընթացքում որոշակի մշակումների կատարելագործման

պարագայում կատարվում են համապատասխան շտկումներ և/կամ թարմացումներ, որոնք կամ տրամադրվում են անվճար կամ ծրագրի և/կամ ուսուցման արժեքի համեմատ չնչին գումարի դիմաց՝ ապահովելու համար տվյալ ոլորտում մեթոդի կիրառման պատշաճ մակարդակը:

4. մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը, 6. ծրագրի բանալիների քանակը,

Կազմակերպության համապատասխան ստորաբաժանումը, այդ թվում՝ Գ. Մարտիրոսյանը գնվող ծառայության մասին պատկերացում կազմելու համար իրականացրել է շուկայի վերլուծություն, դիմել մի քանի կազմակերպությունների, որի արդյունքում պատասխան է ստացվել DSD կազմակերպությունից, որի համաձայն անհրաժեշտ տեխնիկական պահանջներին համապատասխանող ծրագիրը օրինակ PC-CRASH ծրագրի կամ դրան համարժեքը մեկ «բանալի» հնարավորության դեպքում արժե շուրջ 3600 եվրո, բանալիների քանակից ելնելով, համապատասխանաբար, աճում է նաև Ծրագրի գինը (այս համատեքստում անհիմն է դառնում բողոքաբերի այն պնդումը, որ բանալիների քանակի մասին խոսել մեկ տեխնիկական բնութագրում հնարավոր չէ): Ուստի ակնհայտ է, որ Պատվիրատուի կողմից նախատեսված նախահաշվային արժեքը սահմանելիս այն կազմված է եղել մի քանի բաղադրատարրերից, այդ թվում և մասնագետների ուսուցման և համապատասխան հավաստագրերի տրամադրման համար նախատեսվող գումարից, որը, ըստ էության, կազմում է նախատեսված նախահաշվային արժեքի կեսից ավելին: Այսպիսով ուսուցման բաղադրիչի չներառման դեպքում ստացվում է, որ խախտվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է՝ «1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ....»

Այս առումով ստացվում է, որ նախահաշվային արժեքը և միայն Ծրագրի արժեքը ակնհայտ անհամարժեք են:

Բացի դրանից հարկ է նշել, որ մի քանի բանալիների առկայությունը հնարավորություն կտա մի քանի փորձագետի միաժամանակ աշխատել Ծրագրի միջոցով, ուստի և դրանով կկրճատվի փորձաքննության կատարման ժամկետները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումը գերծանրաբեռնված է քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակված մեծածավալ փորձաքննությունների կատարմամբ, օբյեկտիվ պայմաններում փորձաքննությունների կատարման ժամկետների կրճատումը կնպաստի քրեական վարույթի մասնակիցների՝ գործերը ողջամիտ ժամկետում քննելու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքի պատշաճ իրացմանը:

5. ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն),

Ինչպես արդեն նշվել է, Պատվիրատուն տվյալ ծրագրի կիրառման մեթոդի ներդրման հնարավորությունները ձեռք է բերում հստակ անհրաժեշտությունից՝ և քրեական հետապնդում ու արդարադատություն իրականացնող մարմինների կողմից առաջադրված հարցերի (խնդիրների) պատշաճ լուծման նկատառումներից ելնելով, որի համար Պատվիրատուին անհրաժեշտ է ձեռք բերել փորձագետների համար հասկանալի լեզվով Ծրագրի տարբերակը, իսկ սկզբնական շարադրմամբ տեխնիկական բնութագրի պայմաններում հնարավոր չէ բացառել այնպիսի ծրագրի ներկայացումը, որի օգտագործման պայմաններում հնարավոր չլինի հաղթահարել լեզվային պատնեշը, դրանով իսկ անհնարին դարձնելով ծրագրի պատշաճ կիրառելիությունը:

Պատվիրատուն գտնում է, որ Պատվիրատուն պատշաճ հիմքերի առկայությունից ելնելով է կատարել տեխնիկական բնութագրի լրացումը, գործել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նպատակաուղղված է եղել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել տեխնիկական բնութագրին համապատասխանող, անհրաժեշտ գնման առարկան:

Բողոքաբերը պնդում է, որ «հայտը բացվել է, նոր միայն գնման պահանջը դադարեցրել է, ինչը կոմերցիոն գաղտնիքի կոպտագույն խախտում է», այս համատեքստում հարկ է նշել, որ չկա ներկայացված որևէ ապացույց այն մասին, որ հայտը բացվել է գնման պահանջը դադարեցրելուց հետո: Իրավիճակը ճիշտ հակառակն

է. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին: Բողոքաբերի կողմից ներկայացված հայտը բացվել է հայտերի բացման փուլում, այլ ոչ թե գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո: Բողոքաբերի կողմից վկայակոչվում է իր՝ հաղթող լինելը, սակայն հայտերի բացման փուլի և մրցույթի մասնակցին առաջին տեղը զբաղեցրած ճանաչելու փուլի միջև առկա են այնպիսի գործընթացներ ինչպիսիք են անհամապատասխանությունների շտկումները, ընտրված մասնակից ճանաչելը, ըստ անհրաժեշտության բանակցությունների իրականացումը (համաձայն Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մաս): Ինչ վերաբերվում է կոմերցիոն գաղտնիքի կոպտագույն խախտման մասին բողոքաբերի պնդմանը, ապա հարց է առաջանում, առհասարակ, ինչ կոմերցիոն գաղտնիքի մասին է խոսքը և ինչպես է այն խախտվել Կազմակերպության կողմից:

Բողոքաբերը իր բողոքում բազմիցս մատնանշում է տեխնիկական առաջադրանքում առկա թերությունների անհիմն լինելու, ինչպես նաև իր իրավունքները ոտնահարելու և հետագայում մրցակցությունից դուրս մղելու մասին (մեջբերում՝ 22.10.2018թ.-ի դիմում էջ 4-5), այնինչ առնվազն տարակուսանք է առաջացնում նման պնդումը, քանի որ Մասնակիցը որևէ կերպ չի հիմնավորում նման դիրքորոշումը, չի ներկայացնում որևէ ապացույց, ակնհայտ նպատակ ունենալով ստանալ գերշահույթ պետական միջոցների հաշվին՝ հակադրվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմպերատիվ պահանջը, միևնույն ժամանակ կասկածի տակ դնելով Կազմակերպության գործարար համբավը: Նման պարագայում զրպարտիչ տեղեկատվության շարունակական բնույթի կրման դեպքում Պատվիրատուն ստիպված կլինի համապատասխան միջոցներ ձեռնարկել գործարար համբավի պաշտպանության համար:

Հարկ է նշել, որ Պատվիրատուն որևէ կերպ չի սահմանափակում Մասնակցի՝ հետագայում գնման գործընթացին մասնակցելու իրավունքը, ինչի մասին է վկայում իրեն ուղղված նամակը, այլ միակ նպատակը ուղղված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան դատական փորձաքննությունների իրականացման նոր մեթոդի ներդրման հնարավորությունների լիարժեք իրականացմանը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքների քննումն իրականացնում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձը: Այլ կերպ ասած, բողոքներ քննող անձն իրավասու է քննել պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքներ և որոշումներ կայացնել միայն իր իրավասությունների շրջանակներում: Այս առումով Պատվիրատուն գտնում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված խնդրանքն իրեն հաղթող ճանաչելու մասով դուրս է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի իրավասության շրջանակից: Գնման գործընթացում որևէ մասնակցի ընտրված կամ առաջին տեղը զբաղեցրած ճանաչելը հստակ կանոնակարգված է ՀՀ օրենսդրությամբ և ենթակա չէ քննարկման տվյալ բողոքի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.10.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով սահմանվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2018թ. ժամը 10:20-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի 22.10.2018թ. բողոքը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 25.10.2018թ. թիվ 05/597 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ

հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետի համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրենի 02.10.2018թ. N 37-Լ հրամանով ստեղծվել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով մասնագիտական խումբ, որի 08.10.2018թ. ժամը 10:00-ի նիստով հաստատվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների գնման հայտը:

Գնման հայտով նախատեսվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրենի 10.10.2018թ. N39-Լ հրամանով ձևավորվել է Պատվիրատուի կարիքների համար սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-

18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի չորս անդամից բաղկացած գնահատող հանձնաժողով:

Գնահատող հանձնաժողովի 10.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 1 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նախագահը ներկայացրեց «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման հայտարարության և հրավերի նախագիծը: Հանձնաժողովն ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը և որոշեց հաստատել հայտարարության և հրավերի նախագիծը:

Նույն օրը Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական կայքէջում: Հայտերի բացման նիստը նախատեսվել է հայտարարության հրապարակման օրվանից հաշված 8-րդ օրվա ժամը 10:20-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել Ֆ/Ա Ջանիկ Սևոյանը:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը 18.10.2018թ. ժամը 15:00-ին շարունակել է իր աշխատանքը և ստանալով 02.10.2018թ. N 37-Լ հրամանով ստեղծված մասնագիտական խմբի 18.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, որոշել է քննարկել այն և արդյունքում համարում է, որ տեխնիկական բնութագրում առկա է վրիպակ և փաստացի կազմվել է թերի, մասնավորապես՝ բացակայում են մի շարք տեխնիկական պահանջներ՝

ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը),

բ) ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,

գ) ծրագրի տարեկան թարմացումները,

դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը.

ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն),

զ) ծրագրի բանալիների քանակը:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 18.10.2018թ. թիվ 05/586 գրությամբ դիմել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին հայտնելով, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստին պարզվել է, որ ծրագրի տեխնիկական

բնութագրով չեն նախատեսվել մի շարք պահանջներ և նշված պահանջների բացակայությունը կհանգեցնի ծրագրի ոչ լիարժեք օգտագործմանը և փորձաքննությունների ոչ պատշաճ կատարմանը:

Նշված գրությամբ Պատվիրատուն խնդրել է ՀՀ ԳԱԱ-ի թույտվությունը՝ գնման պահանջը դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի 19.10.2018թ. N 224-Ա հրամանով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2018 թվականի հոկտեմբերի 10-ին հայտարարված՝ սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով:

Այսպիսով, ուսումնասիրելով «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգը, պատասխանատու ստորաբաժանման և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) գնահատող հանձնաժողովը:

Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված գնումների, վառելիքի, քսայուղերի, գյուղատնտեսական նշանակության ապրանքների և ավիասպասարկման ծառայությունների դեպքում պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը:

Կարգի 31-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է հրավերի տեքստը:

Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից:

Այսպիսով՝ վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլև նաև մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը, օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու բավականին երկար գործընթաց, նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ ուղղված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է

ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Դրա հետ մեկտեղ՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ընդ որում տեխնիկական բնութագրի կազմման՝ Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Կարգի 13-րդ կետը նախատեսել է, որ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից: Դրա հետ մեկտեղ Կարգի 15-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Այսպիսով՝ «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի գանահատող հանձնաժողովը, պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտի հիման վրա, 10.10.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 1 արձանագրությամբ հաստատել է «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման հայտարարության և հրավերի նախագիծը, որոնք նույն օրը հրապարկվել են www.gnumner.am պաշտոնական կայքում:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հայտերը բացելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համար պարզ է դարձել, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմվել է թերություններով և վերջինիս մեջ չեն ներառվել մի շարք տեխնիկական պահանջներ, որոնք ներառված են Պատվիրատուի կարիքին համապատասխան գնման առարկայի մեջ:

Ուսումնասիրելով «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգը՝ գտնում եմ, որ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը, ինչպես նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմելիս և հաստատելիս, թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի վկայակոչված՝ տեխնիկական բնութագրի մասով գնման հայտի կազմմանն, հրավերի տեքստի հաստատման համար սահմանող պահանջների խախտումներ, որի հետևանքով «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգը՝ նշված տեխնիկական բնութագրով գնման առարկայի գնման պահանջի վերացման պատճառով հայտարարվել է չկայացած:

Դրա հետ մեկտեղ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***<u>Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝</u>***

1) <u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.</u>

2) <u>գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:</u>

Նման պայմաններում, ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերն, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով ի սկզբանե սխալմամբ նախատեսվել է գնման առարկայի այնպիսի տեխնիկական բնութագիր, որն թերի է եղել և չի համապատասխանել Պատվիրատուի կարիքին: Պատվիրատուն հայտնել է, որ նշված տեխնիկական հատկանիշներով առարկայի գնումը համարժեք չի կարող հանդիսանալ այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02»

ծածկագրով ընթացակարգը, քանի որ տեխնիկական բնութագրում չեն նախատեսվել մի շարք կարևոր պահանջներ:

Գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ տեխնիկական բնութագրում առկա է վրիպակ և փաստացի կազմվել է թերի, մասնավորապես՝ բացակայում են մի շարք տեխնիկական պահանջներ՝

ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը),

բ) ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,

գ) ծրագրի տարեկան թարմացումները,

դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը.

ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն),

զ) ծրագրի բանալիների քանակը:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 18.10.2018թ. թիվ 05/586 գրությամբ դիմել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին հայտնելով, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստին պարզվել է, որ ծրագրի տեխնիկական բնութագրով չեն նախատեսվել մի շարք պահանջներ և նշված պահանջների բացակայությունը կհանգեցնի ծրագրի ոչ լիարժեք օգտագործմանը և փորձաքննությունների ոչ պատշաճ կատարմանը:

Նույն գրությամբ Պատվիրատուն խնդրել է ՀՀ ԳԱԱ-ի թույտվությունը՝ գնման պահանջը դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի 19.10.2018թ. N 224-Ա հրամանով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2018 թվականի հոկտեմբերի 10-ին հայտարարված՝ սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով:

Ուսումնասիրելով վերոհիշյալը, արձանագրում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմվել է մի շարք նորմերի խախտումներով, այնուամենայնիվ, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գնման տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման, պատվիրատուի կարիքին համարժեք լինելու իմպերատիվ պահանջների առկայության պայմաններում, «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան առարկայի ձեռքբերումը չի կարող համարվել արդյունավետ և օգտավետ Պատվիրատուի համար և կհանգեցնի նշված գնման պահանջի համար գնման պլանով նախատեսված ֆինանսնական միջոցների ոչ արդյունավետ օգտագործմանը, քանի որ Պատվիրատուն նման տեխնիկական հատկանիշներով առարկայի գնման պահանջ փաստացի չունի:

Ուստի նման պայմաններում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի կողմից 22.10.2018թ. ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի կողմից 22.10.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**